ՍՈՎՈՐՈՂ

Սովորողն է կազմում ԱՈւՊ-ի առանցքը և ողջ գործընթացի բոլոր փուլերի կենտրոնը, ուստի նրա հնարավոր մասնակցությունը ԱՈւՊ-ի մշակման գործընթացներին շատ օգտակար կլինի արդյունավետ և իրատեսական փաստաթուղթ ունենալու համար: Աշակերտի ներգրավվածության բնույթն ու աստիճանը կարող են տարբեր լինել՝ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են, օրինակ՝ տարիքը, հասկանալու և հաղորդակցվելու կարողությունը: Էական նշանակություն ունի նաև այն, որ ուսուցիչները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներն ու ծնողներն աշակերտին օգնեն հնարավորինս լավ հասկանալու իր ուսուցման պլանավորման նպատակադրումները: Հնարավորության դեպքում սովորողը կարող է՝

- մասնակցել ԱՈւՊ-ի՝ որպես իր համար ամենանպատակահարմար ծրագիր կազմելու որոշմանը,
- մասնակցել (մասամբ կամ լիարժեք) իր ԱՈւՊ-ի մշակման, իրականացման և գնահատման գործընթացներին,
- ինքնագնահատման միջոցով բացահայտել և մատնանշել իր նախասիրությունները և ուժեղ կողմերը,
- մասնակցել իր կրթության երկարաժամկետ նպատակների և տարեկան վերջնարդյունքների՝ նպատակների սահմանմանը,
- մասնակցել իր ԱՈւՊ-ի քննարկումներին՝ ներկայացնելով իր ուսումնառության առաջընթացը խթանող կամ խոչընդոտող գործոնները,
- ինքնուրույն կամ այլոց հետ համատեղ գնահատել իր գրանցած առաջընթացը:

ԱՈւՊ-ի մշակման գործընթացին կարող են մասնակցել նաև այլ անձինք (օրինակ՝աշակերտի ընկերները, քույրը կամ եղբայրը):